ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԼՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Լրագիրս հինգշաբթի ու ենթ ամենայն յաջորդ օրերին դուրս կու գայ մեծ թերթով ի լոյս ամեն 4 տուն հասց 14-օրեայ միջոցի

Հրատարակիչն ամեն տարի 52 թիվ ունի Տարեկան բաժանորդագրութեան գինն է 6 ռուբլի

Ջ. ՏԱՐԻ | ՅՈՒԼԻՍԻ 20, 1863 ԱՄԻ | № 23.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

22ին յունիս, 1863ին.

ԵԹԷ Ռուսաստանը իր գնապանագիտական արուեստովը, ընդունի վեց հատուածները և եթէ Լեհաստանը բացասէ ընդունելու նրանց, ի՞նչ պիտք է անեն երեք մեծ տէրութիւնները և ի՞նչ կ'լինի նոցա գործունէութիւնը: Այսպիսի հարցումն է տալիս այսօր իրան Journal des Débats» անուամբ է հարցումն, միայն ինչպէս առ հասարակ լինում է, թողնում է առանց ճանելու: Նոյն հարցումն անուամբն և շատ մատենագիրներ և լրագիրներ և ով գիտէ, գուցէ նոյնը անուամբն իրանց ևս Լորդ Պալմերստոնը, Լորդ Ռոսսէլը, կոմս Ռեխբերգը և Դրուէն-դէ-Լիւիսը և մինչև անգամ ինքը Նապոլէոն Գ.: Եւ մեք, ի՞նչ պիտք է անել և ցեպի ո՞ր ընթանալ:

Մենք մեծ զգուշութեամբ աշխատեցանք հաղորդելու այն կարծիքները, որոնք տարածվել էին վերջին ժամանակները Եւրոպայի մէջ, երեք տէրութեանց ծանուցագիրներին առաջ պատասխանի բնաւորութեան և որպիսութեան վերայ Ռուսաց կառավարութեան կողմից: Փարիզում մինչև անգամ համբաւ էր տարածվել, որ վեց հատուածների հիմունքը իսկապես ընդունելի կ'լինեն Ռուսաց կառավարութեանը: Այս համբաւը տարածողները ասում են, որ այն վեց հատուածների մէջ չկայ մի այնպիսի բան, որնոր հակառակ լինի Ռուսաց կառավարութեան արդէն իսկապէս յայտնած կամ աչքայով հրատարակած ցանկութիւնները: Ներողութիւնը դեռ և բոլորոյն միջամտութիւնից առաջ առած էր Լեհաստանի միայն նոքա չկամեցան շահվել նրանից: Ազգային երեսփոխանութիւնը կար Լեհաստանում դեռ առաջ: Նա ունէր նահանգական և գաւառական խորհուրդներ ու թագաւորական խորհրդարան, ուր ներկայ էին գանվում ամէնից ընտիր Լեհերը: Մարտի 31ի հրովարտակումն արտայայտած էր ցանկութիւնը արանալու երկրի (Լեհաստանի) համար նոր շրջան քաղաքական կեանքի, որնոր կարող է առաջ գալ միայն խոհեմութեամբ անշահան անկախ կառավարութիւն կարգելուցը: Անտարակոյս է, որ մի կողմից իրանք Լեհերն են յանցանքը, որ նոր արած կարգադրութիւնները չառաջ չբերեցին և չկարողացան պատճառել երկրին բարօրութիւն: Բոլոր ներքին կառավարչութիւնը, թէ բարձրը և թէ ստորինը, յանձնած էր Լեհերին: Լեհաց լեզուն էր, թէ կառավարչական, թէ դատաստանական և թէ դպրոցական լեզուն: Հոռմէական դաւանութիւնը, մանաւանդ բուն Լեհաստանի մէջ վայելում էր կատարեալ ազատութիւն: Վերջապէս 1859ի կանոնաւոր զինուորագրութեան օրէնքը բոլորովին բաւարարիչ էր արդարութեան պահանջողութիւններին: Ուրեմն ի՞նչ նոր բան հնարէց Լեհաստանի համար նորա պաշտպանը եւրոպական դեսպանագիտութիւնը:

Մնայն Ռուսաց մէջ չէ եղել, որ վերջին խնդիրը լաւ և քան թէ առաջինը: Այս ամէն մարդու սեպհական է եղել:

երկու ամիս Եւրոպան մոռացումէր, թէ ի՞նչ լաւ բան անէ Լեհերի համար։ Անգադար սուրհանդակներ վազումէին փարիզից և Լոնդոնից Վիեննա, այստեղից էլ դէպի Ֆրանսիայի և Անգլիայի արքունիքները, հեռագիրները շարունակ դործողութեանց մէջ էին, դատումէին, վիճաբանումէին և կշռումու վերջապէս դատն հնարը։ Բայց ի՞նչէր այն։ Եւրոպան չհնարեց ուրիշ բան, բայց եթէ միևնոյնը ինչոր կամենումէր անել Ռուսաստանը. միայն ուրիշ ձևերով։

Եւրոպան ապատումէ այժմ որ Ռուսաց դեսպանագիտական արհեստը կ'դնէ նրան դժուար դրութեան մէջ։ Ի՞նչ կ'լինի յիրաւի, եթէ Ռուսաստանը շնորհակալութեամբ և առանց ընդդիմութեան Եւրոպայի առաջարկած վեց հատուածները ընդունելու լինի և խնդրէ, որ Լեհերի պաշտպանները չի դործ դնեն իրանց բարոյական ապրեցութիւնը և ստիպեն նրանց զէնքը վեր դնելու, համաձայնելով այն հիմանց հետ, որոնց մասին այնքան հոգս են քաշումէ Եւրոպան երեք մեծ տէրութիւնները, և դառնան դէպի նոյն դրութիւնը որի մէջ ապստամբութիւնից առաջ գըտնվումէին։ Ի՞նչ կ'անեն այն ժամանակ Լեհերը։

Թէ ի՞նչ են նոքա ասում մայժմ, մենք գիտենք։ Նոքա ասումեն, թէ այն վեց հատուածները ընդունելը իրանց համար մի ևնոյն է, թէ իրանք իրանց ձեռքով ատրադրեն իրանց մահուան վճիռը։

Ուրեմն և այն դեսպանագիտական մըրիկը, որնոր յարուցին եւրոպական տէրութիւնները Ռուսաց դէմ դեռ ևս ոչինչ աւելի բարօրութիւն բերել Լեհերին չէ խոստանում։ Այժմ նոքա դառն փորձերից յետոյ, պէտք է աշխատեն գտնել հնար իրանց դրութիւնը լաւացնելու համար։ Երանի թէ այս շուտով լինէր։

—Բրամբերդի լրագրում, յուլիսի 4ին, տպած էր վարչավայում գտնվող մի թղթակցի դրութիւնը։ Սորա մէջ խօսվումէ և նորա վերայ էլ, որ իբրև թէ այնպէս ամուր կառավարութիւնը իրկնէ Ամէն-Չեմեան (Անգլիական) և Տիւլերիեան (Ֆրանսիական) արքունիքներին յայտարարութիւն, որի մէջ բացատրումէ այն պայմանները, որանց հիման վերայ լինքը համաձայն է եւրոպական դեսպանաժողով կանչելուն։ Այս պայմանները են՝ զինադադարութիւն, եւրոպական բարեշնորհութեամբ և ազգային զօրքի պաշտպանութեամբ հաւաքելու երեսփոխանական ժողովը, ոչ միայն բուն Լեհաստանի համար, այլ և այն գաւառների համար, որոնք բռնութեամբ միաւորվել են Ռուսաստանի հետ։

Ահա որքան հեռի են այս պայմանները եւրոպական այն վեց հատուածներից և որքան թերի է եղել եւրոպացիների հասկացողութիւնը Լեհերի ցանկացածների վերայ։

—Աթէնքի ազգային ժողովի 18ին յունիսի նիստում յայտնվել է գէորգ Ա. թագաւորի կատարեալ համաձայնութեամբ և մեծ ուրախութեամբ ընդունվեցաւ այս վճիռը ամենից։ Գէորգ թագաւորը դեռ կատարել տանում չկայ։ Նա ծնել է 1845 թուականի դեկտեմբերի 24ին։

—Ֆ պատերազմը և թէ խաղաղութիւնը ամեն օր տատանման մէջ են։ Անցեալ օրերի լրերի եկած հիման վերայ հաղորդեցինք, որ Եւրոպան աւելի հակամիտ է դէպի խաղաղասիրական զդայմունքները և յոյս մեծ ունի, որ Պետերբուրգից հաճոյական լուրեր կ'ստանայ։ Իսկ այսօրվան եկած լրագիրների համրաւները ցոյց են տալիս, որ էլի կարծիքների փոփոխութիւն է եղել Եւրոպայում։ Նապոլէոն կայսեր Շերբուրգում նաւատորմին անելու հանդէսի լուրը, որնոր մոռացվել էր արդէն նորից դառել է առարկայ այլ և այլ խօսակցութեանց։ Կիսապաշտօնական լրագիրները հարկաւոր համարեցին հաւատացնել, որ կայսրը ամենևին գնալու չէ Շերբուրգ և թէ շվեդիան ամենևին գիտաւորութիւն չունի խրկելու իր տորմիղը այնտեղ, որ Ֆրանսիացիները անպաշտպան և ոչ մի մեծ ծովային հանդէս չէ կարող լինել։ Բայց յայտնի է, որ շատ անգամ, երբ «Constitutionnel» կամ «Pays» լրագիրները ասումեն «ոչ» հասկանալու է «այո» և ընդհակառակն։ Ըստ որում այս լրագիրների հաղորդած լուրը մեծ ազդեցութիւն ունին վաճառականների ժողովարանի վերայ։

Բայց նոյն օրը, երբ փարիզում մեզնից գիտեին, որ կայսրը դնումէ վիշտ իր տարաձնորը և երբ «Constitutionnel» ջնումէ այն համրաւները, թէ նա պէտք է մեծ հանդէս անէ նաւատորմին, իր դեսպանագիտական դործողութիւններին աւելի ոյժ և նշանակութիւն տալու համար, նոյն օրը «Indépendance Belge» լրագրի թերթերում տպած էր մի հեռագրական լուր Նեապօլից, թէ ուրը պատերազմական իտալական նաւեր, 334 թնդանօթներով, գնումեն, յայտնի չէ իսկապես ուր, միայն ասումեն, որ գնումեն Շերբուրգ Ֆրանսիական և շվեդ նաւատորմիղներին այցելութիւն անելու համար։ Ահա էլի երկու զանազան լուր, որնք միմեանց ջրումեն, և որնոցից միևը անպատճառ սուտ պէտք է, լինի։ Ոչ միևը յիշեալ Ֆրանսիացի լրագիրներից չէր տպագրել Իտալիայից եկած հեռագրական լուրը, իսկ «Indépendance» (բելգիական լրագիր է), որնոր երկու օր արդեօք տարածել փարիզի մէջ, գուցէ էլի քանի մի օր նոյն վիճակի մէջ ձնայ։ Այլ որը այս երկու լրերից սուտ է, մեր բանը չէ։ Մենք միայն պէտք

է, քննենք սղբիւրը այն պատերազմական լրերի և պատրաստութիւնների: Մենք չպէտք է քննենք խաբվելով այն խաղաղասիրական զգացմունքների արտայայտութեամբ, այլ միշտ պատրաստ, պէտք է, լինենք հանդիպելու թշնամուն, որքան էլ սա իրան մեր բարեկամ կեղծելու լինի:

Պատերազմը սարսափելի թշուառութիւն է, թէ ազգի և թէ երկրի համար: Խոհեմութիւնը պահանջում է, որ ամէն միջոց և հնար՝ի գործ դրվի նորա առաջը առնելու համար: Միայն պատահում են այնպիսի հանգամանքներ, ուր խոհեմութեան և մարդասիրութեան միջոցներ չեն ազդում, ու այն ժամանակը պատերազմից փախչելը պիտի համարվի թուլութիւն և երկչոտութիւն: Պատահում են հանգամանքներ, ուր տէրութեան պատիւը պահանջում է պատերազմ և այս պահանջողութեանը բոլոր միւս պարագաները ու յանկութիւնները պէտք է տեղի տան: Մեր ազգային զգացմունքի վիճակը յայտնի է: Կարծեմ բանը այնքան առաջ է գնացած, որ ուրիշ հնար չկայ, բացի այն, որ այժմ ամենքս պէտք է պատրաստ լինենք հանդիպելու ամէն պատահմունքի այնպէս, ինչպէս կ'վայելէ մեծ ազգին և մեծ տէրութեան:

Հասարակաց միտքը այժմ Ռուսաստանում մեծ գըրգռման մէջ է: Ամէնքն էլ անհամբերութեամբ նպաստում են մեծ և նշանաւոր վճռին, որնոր այս օրերս շուտ պէտք է յայտնվի: Ինչպ'ես էլ լինի այս վճիռը, Ռուսաց ազգը հաւատացի է, որ նորա պատիւը և օգուտը միաս չի կրել: Նա լիքն է պիտակցութեամբ, որ անհնար է նրան դիպչողին անպատիժ մնալը: Նա պատրաստ է միշտ պատերազմելու իր պատուի, իր սեպհականութեան և այն տեղի համար, որնոր նա բըռնած ունի ազգերի շարքում:

Այժմ թէ Ֆրանսիան հաստատութեամբ աչքի առջևը ունի պատերազմ, կարելի է, տեսնել աշխարհայ «Pays» լրագրի յօդուածից, որ ստորագրել էր նորա խմբագրատան ատենապետը: Նա ասում է. «Մենք շատ կարեւոր ենք համարում մի դաշնագիր, որնոր ամէն ամրացնէր այն կապը, որնոր երկք մեծ տէրութիւնների մէջ կայացել է, որ սորա վերայ յինելովնոքա ամէն և զգան իրանց զօրութիւնը, երբ հարկաւոր կ'լինի դէմ պատնաժողովի խորհրդածութեանցը մասնակցելու և կամ [illegible]»:

Փարիզ. շաբաթ 29 յունիսի: Մօնիտեր լրագրում տպած էր հետևեալ լուրը, որնոր հաղորդել էր Սան Ֆրանցիսկոում նստող Ֆրանսիայի հիւպատոսը (կօնսուլը) և որնոր յայտնում է, որ Մեքսիկ. քաղաքը անձնատուր է եղել Ֆրանսիացիներին:

Голосъ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Գերապարզ

Հրատարակիչ Մեղու Հայաստանի.

Կաղզը պարտականութիւն դրին ինձ վերայ իմ սիրելի ընկերներին յայտնել Ձեր աշխատասէր Մեղուի միջոցով մեր սիրելի Հայերին, ինչպէս և հրատարակուեցաւ Ռուսաց Московская Вѣдомостьում, այս յետագայ և մարդասէր գործն.

Մոսկվայի Համալսարանի հիմնադրութեան օրն, որ է 12ն յունվարի, միշտ կատարում են տոնախմբութիւն, ինչպէս Մոսկվայում, նոյնպէս և միւս քաղաքներում, ուր տեղ վիճակը պցել է այդ Համալսարանի ուսանողներին: Տփխիսում նոյնպէս, որ կարելի է արդէն շատերին յայտնի ըլլի, Գ. բժիշկ Դաւիթեանցը միաբ գըցելով իր ուսանողական կեանքը, հրաւիրել է այն պրոֆեսորներին, որոնք էլել են մի ժամանակ ուսանող Մոսկվայի Համալսարանի և տոնախմբութիւնից յետ առաջարկել է հաւաքել դրամ Մոսկվայի հայ չքաւոր ուսանողաց համար, որ և ժողովվել են 200 ռուբլի: Այդ դրամը ուղարկելով Լազարեանց ճեմարանի վերատեսուչ Պարոն Քանանեանցի մօտ, խնդրել են համաձայն հայ ուսանողաց բաժանել իրանց միջի չքաւորներին որ կատարուեցաւ ճշդութեամբ: Այդ պատճառաւ խնդրում եմ Ձեզ, իմ ընկերների կողմից աշխատէք պատուական Մեղուի միջոցաւ յայտնել մեր շնորհակալութիւնը էգ պ որոնց:

Եղբակացութիւնը ու վերջաբանութիւնը թողնելով ամէն մի բան հասկացող մարդին, թէ ինչքան գովելի ու ազնիւ գործ է, և թէ ամէն հայ փոքր դրամ գոհելով ինչքան աղքատ տղերանց կ'տան միջոց ստանալ համալսարանական ուսում,

Մնամ յարգող

Յարգելոյդ Գ. Քուչարենց:

Մ-ին 1863. 1 ց-ին:

ԱՄԱՑԻ ԿՂԶԻ

Մի բարի պարոն, կամենալով բազատաւորել իր ըստրուկին, տուեց նրան ազատութիւն և ընծայեց նրան մի նաւ թանգագին ապրանքներով: —«Գնա»-ասաց նրան, նաւիր օտար երկիրներ, բազմացրու հարստութիւնդ և ինչըր դասես բոլորն էլ քոնն լինի»:

Սորուկը գնաց. բայց շուտ ծովում վերկացաւ մրրիկ և նաւը ժայռերի հանդիպելով խորտակվեցաւ: Թանգագին ապրանքները ծովի տակը գնացին: Նաւի վե-

բայ դժնուղները բոլորը խեղդվեցան և միայն սորուկը մեծ աշխատանքով հասաւ մերձակայ կղզու ափը: Գաղացած, տկլոր և անօդնական առաջ գնաց նա կղզու մէջ, սաստիկ ողբալով իր քամբախտութիւնը: Մի քիչ առաջ երթալից յետոյ տեսաւ նա մի մեծ քաղաք, որի բնակիչները բազմութեամբ նորա առաջ գալս ուրախալի ձայներ արձակելով «կեցցէ մեր թագաւորը» բղաւում էին: Նորա յետոյ նստացրին նրան կառքի վրայ և փառքալուծան քաղաքը: Ցետոյ մտցրին նրան թագաւորական պալատը, հագցրին նրան թանկագին ծիրանի և նստեցրին ոսկէ գահի վրայ, մեծամեծները պատեցին նրան ամէն կողմից, ծունր իջան նորա առաջին և բոլոր ազգի անուններով հաւատարմութեան երդում տուին նրան:

Նոր թագաւորը սկզբնում բոլորը երազ էր կարծում միայն կամաց կամաց համոզվեցաւ, որ տեսածը երազ չէ: Աթոլորովին ես բան չեմ հասկանում, մտածում էր նա, սիրէ՞ այս մարդիկ աչք չունին: Վեր առան քաղցած, տկլոր աղքատին և իրանց թագաւոր դրին նրան: Զարմանալի սովորութիւններ ունին այս երկրի մարդիկը»:

Այսպէս էր մտածում նոր թագաւորը և նորա հետաքրքրութիւնը այնքան զօրեղ էր, որ նա վերջապէս որոշեց հարցնել այս անհասկանալի անցքի պատճառը իրան պատող անձինքներից մէկին, որոր երևում էր նրան մի բարի և խելօք ծերունի: —«Վէզիր» (նախարար) ասաց նոր թագաւորը ծերունուն, լսդրում եմ. մեկնիր ինձ, ինչո՞ւ դուք ինձ ձեզ թագաւոր ընտրեցիք: Դուք ինչպէս իմացաք, որ ալիքը ինձ կղզու ափը դուրս պցնց և կամ թէ սորա վերջը ինչ պէտք է լինի:

«Իմ իշխան», պատասխանեց նրան վեզիրը, այս կղզու մէջ ոչինչ են բնակում: Նորա վաղուց ի լսընդունած ունին ամենակարող Աստուծմէ, որ սա նրանց իշխելու համար ամէն տարի լսրկէ Ադամայ որդիներից մէկին: Աբարիչը լսեց այս լսնդիրքը և ամէն տարի լսրկում էր մեր կղզին մի մարդ: Բնակիչները սորա առաջ են գնում գուռս գալի ուրախալի ձայներով, ինչպէս ինքդ էլ տեսար, և ընտրում են նրան իրանց թագաւոր, միայն մի տարով: Իսկ երբ անցնում է տարին և գան է նշանակած օրը, նորա զրկում են նրան թագաւորական իշխանութիւնից, հանում են նրանից բոլոր զարդերը և հագցնում հասարակ հին շոր: Նորա եղած հագուստները բռնութեամբ տանում են նրան ծովի ափը, նստեցնում են մի նաւակի վերայ և դցում ծովը: Այս նաւակը տանում է նրան մի վայրենի և ամայի կղզու վերայ և մերկը, որոր մի քանի օր առաջ դորել թագաւոր էր, դուրս է գալիս այն ամայի կղզու ափը քաղցած, տկլոր և աղքատ: Նա այնտեղ չէ գտնում ոչ բնակիչ, ոչ հագուստներ և ոչ մի մարդ-արարած որ կարկինց լիներ նորա խղճալի դրութեանը և եթէ նա իր թագաւորութեան տարին խոհեմութեամբ և օգտակար չէ դործ դրել, նա վարում է ամայի կղզու վերայ աղքատ և թշուառ կեանք: Ծովեզերքը իր թագաւորը աքսորելից յետոյ, գնում է ծովի ափը և հասատ գիտէ, որ վ՛ գանէ այնտեղ նոր անձնարհնոր նախանձնամութիւնը անտես չէ անում ամէն տարի խրկելու: Այս է, ով իմ իշխան, մեր թագաւորութեան յաւիտենական օրէնքը—և ոչ մի թագաւոր չէ կարող նրան փոխել»:

«Իմ նախորդները դիմէին արդէօք, հարցրեց թագաւորը, այն վիճակը, որ նրանց սպասում էր մի տարի յետ:

«Քաղաքի այս անփոփոխ օրէնքը ոչ մէկից նրանցից ծածուկ չէր,—պատասխանեց վեզիրը.—միայն շատերը նրանցից, կուրացած այն ճոխութեամբ, որ պատում էր նոցա գահը, մոռանում էին թշուառ ապագան և վատ էին անցնում իրանց թագաւորութեան տարին: Բազատաւորութիւն վայելելիս, նոքա չէին անդամ համենում հաւատալ, որ կայ յիրաւի այն ամայի կղզին, մինչև անդամ մտածել չէին ուզում նորա վերայ, որ իրանց ներկայ բաւականութիւնները չթուանային և միւս յիշողութիւնից միւսի մէջ ընկղմվելով նոքա ինչպէս հարբածներ մոռանում էին իրանց թագաւորութեան վերջին. իսկ երբ հասնում էր թշուառութեան օրը, նոքա ամէնքը դանդատում էին իրանց բաղտի վերայ և անիծում էին իրանց կուրութիւնը. բայց այն ուշ էր արդէն. նրանցը անվնաս գցում էին նաւակը և մոռանում էին ամենայն թշուառութեանց, որոնց առաջքը առնել չկամեցան իրանց խմաստութեամբ»:

Վեզրի խօսքերը սարսափեցրին թագաւորին, որոր զարհուրում էր իր նախորդների վիճակը միտը բերելիս, ուստի և հանատաւութեամբ որոշեց սպասավել նորա վիճակից: Նա արտմութեամբ յիշում էր, որ արդէն քանի մի շաբաթը անցել էր նորա կարճատև թագաւորութեան և սկսաւ մտածել, թէ ինչպէս անէ, որ լաւ անցկացնէ իր թագաւորութեան մնացած ժամանակը:

Իմաստուն վեզիրը, ասաց նա ոգիին, գուռ յայտնիցիր ինձ այն վիճակը, որոր ինձ սպասում է և իմ թագաւորութեանս կարճատևութիւնը, լսդրում եմ քեզ, սա ինձ այն էլ, թէ ինչ պէտք է անեմ, որ աղատվիմ նախորդներիս թշուառ վիճակից»:

«Յիրաւի, ով իշխան,—պատասխանեց նրան ոգին, որ գուռ մեր կղզին մտար մենակ, տկլոր և անօդնական, այնպէս էլ գուռս կերթաս նրանից—և էլ երբէք չես լսի գաւառալ: Մի միջոց միայն կայ աղատվելու համար այն թշուառութիւններից, որոնք սպասում են քեզ

աքսորման անլուծմ այն է, սրա այն երկիրը պղտաբեր և բնակիցրուռ այնտեղ մարդիկ: Մեր օրէնքով դուռ կոտրելն այդ անել և քո հնազանդ հպատակներդ այժմ կերթան այնտեղ, ուր միայն դուռ նրանց կ'նկատես: Ուրիշ մի երկիր ամայի կղզին, որքան կարելի է, շատ մշակ, որ գործեն երկիրը, շինեն քաղաքներ և լցնեն սրանց ամէն այն առարկաներով, որոնք հարկաւոր են կեանքի համար: Մի խօսքով պատրաստեր քեզ համար մի ուրիշ Թագաւորութիւն, որի բնակիչները ուրախութեամբ կընդունեն քեզ, երբ այստեղից կ'աքսորվես: Միայն ըշտացողը և մի բոպէ էլ մի կորցնիր ի զուր: Ժամանակը կարճ է, և որքան լաւ բարեկարգես քո ապագայ Թագաւորութիւնդ, այնքան աւելի բաղաձար կ'լինի կեանքդ այնտեղ: Ամէն առաւօտ երևակայիր, որ այն օրը վերջանում է տարիդ—և օգուտ քաղիր քո աշխատութիւնից: Եթէ դուռ իմ խորհուրդս ոչընչի տեղ կ'դնես, կ'պանդաղես ու բաւականութեանց մէջ կ'ընկղմիս, դուռ կորած ես—և դառն վիճակ ապաստամէ քեզ:

Թագաւորը իմաստուն մարդ էր և ոգու խօսքերն յարուցին նորա մէջ հաստատ որոշումն: Նա իսկոյն հրկիզ ամայի կղզին բազմաթիւ մշակներ, որոնք ուրախութեամբ գնացին և ջերմեռանդութեամբ սկսան գործել: Կղզին շուտ սկսաւ ծաղկել. չանցաւ վից ամիս, նորա վերայ յայտնվեցան շատ հարուստ քաղաքներ, պատած արտերով և ծաղիկներ մարդատեսիներով: Գնալով այս բանին Թագաւորը էլի աւելի շարունակ աշխատում էր աւելի և աւելի բարեշրջել իր ապագայ Թագաւորութիւնը. նա միշտ խրկում էր այնտեղ նոր բնակիչներ: Ամէն նոր բնակիչ գնում էր այնտեղ աւելի մեծ ուրախութեամբ, քան թէ իր նախորդները, որովհետև գտնելու էր այնտեղ գործած երկիր, ուր բոլոր նախկին էին նորա ապրանքները և բարեկամները: Մինչ այժ մինչ այն ատրուան վերջը մօտենում էր: Սրանից առաջ նրած Թագաւորները սարսափով ապասում էին այն օրը, երբ պէտք է վերջանար նոցա կարճատև իշխանութիւնը. բայց այս նոր Թագաւորը ապասում էր նրան առանց երկիւղի, մինչև անգամ ուրախութեամբ, որովհետև նա անցնելու էր այն երկիրը, ուր իր իմաստութեան գործունէութեամբ պատրաստել էր իրան հաճոյական և հաստատ բնակութիւն:

Վերջապէս եկաւ հաստատ նշանակած օրը, Թագաւորին թունեցին, դուրս բերին պալատից, հանեցին նրա բանից Թագը և Թագաւորական զգեստները, և զրկին այն անխուսելի նաւակի վերայ, որնոր տարաւ նրան աքսորման երկիրը: Միայն հազիւ նա դրաւ իր ոտը կղզուս ափը և ահա նորա բնակիչները ուրախութեամբ նորա առաջը գալիս եկան, ընդունելին նրան մեծ պատուով և այն Թագի տեղ, որի փառքը միայն մի տարի տևեց, զարդարեցին նորա գլուխը անթառամ ծաղկեայ պսակով: Ամենակարողը վարձատրեց նրան իմաստութեան համար, տուեց նորան հպատակներին անմահութիւն և կարգեց նրան կատարեալ և յաւիտենական Թագաւոր նոցա վերայ:

Հարուստ մարդը—սարսափէն էր, Սարուկը, որին խրկում է պարոնը—մարդն է իր ծննդեան ժամանակ կղզին, ուր նա հանում է—երկիրս է, որի վերայ մենք յայտնվում ենք ակլոր և անօգնական բնակիչները, որոնք առաջ են գալիս—ծնողներն են, որոնք հոգ են քաշում թոյլ արարածին վերայ: Վհզիրը, որնոր պատմեց նրան այն վիճակի վերայ, որ սպասում է նրան—և բանականութիւնը և կրօնը: Միամտայ կառավարութիւնը—մարդուս կարճատև կեանքն է, իսկ ամայի կղզին հանդերձեալ աշխարհն է: Մշակները, որոնց Թագաւորը խրկում է այնտեղ—են մարդուս բարի գործերը իր կենաց ժամանակ, իսկ Թագաւորները, որոնք ենթարկվեցան Թշուառ բաստի—են այն մարդիկ, որոնք, ընկղմելով անցաւոր և երկրային բաւականութեանց մէջ, մոռանում են այն կեանքը, որնոր սպասում է նրանց մահից յետոյ. Նոքա յայտնվում են Ամենակարողի աթոռի առջևը առանց քարի գործերի և ստանում են այս պատճառով Թշուառութիւն ու տանջանք:

—

Շատ քիչ անցած է պատահած այնպէս ինչպէս երկու նաւատների պատահեցաւ 1830ի պատերազմի ժամանակ Տաճկաց դէմ: Կարճ միջոցում քանի մը անգամ նոցա բազդը քամբախտութիւն փոխվեցաւ և քամբախտութիւնը բարեբախտութիւն զարմանալի կերպով: Մի ծովային կռիւ, որնոր շատ սաստիկ էր, գնդակները յուզում էին ու նաւերի տախտակները և կայմը ճարճատում ու կրակները թըռչոտում այս կողմը այն կողմը, մի նաւ վառեցաւ և անհնարին էր հանդցնելը: Զարհուրելի վիճակ է նաւատների վիճակը, երբ նոքա, պէտք է, միայն ըստութիւն անեն երկու տեսակ մահուան մէջ, այսինքն կամ ջրում են խեղդվել պէտք է յանձն առնուն և կամ կրակում այրվելը: Բայց այս երկու ռուս զինուորները չհնազանդեցան բազդ այս ընտրութիւն էլ անելու, որովհետև մինչև նոքա կ'մտածէին իրանց մահուանվերայ կրակ ընկաւ վառօդի մննեակը ու նոցա նաւը որոտալով բարձրացաւ օդը: Նաւի հետ բաձրացան և երկու նաւատներն էլ, բաւական ժամանակ օդում պատելից յետոյ ընկան ծովը, միայն Թշնամիները, նաւատորմիղն մօտ և իրանք ծնայլն կենդանի ու անվնաս և այս մի մեծ բազդ էր նոցա համար միայն տաճկները վիշապի պէս

յարձակեցան նոցա վերայ և դուրս հանեցին նրանց ծովից թրջած միներու նման ու տարան իրանց նաւը: Խեղճ նաւաստիները ձածիկների պէս թշնամիներից ինչ լաւ բան կարող էին ակասել: Նրանց ոտերը գցեցին շղթայ ու փակեցին նաւի ամենից ներքևի ու նամ անհոտը: Եւ այս էր մեծ քամբախտութիւն: Բայց պատերազմը էլի շարունակվում էր իր առաջվան սաստկութեամբ, թնդանօթների որոտումն գնդակների սուլոցն, նաւերի կայմերի և տախտակամածների ճարճատումն մարդու ականջ էին խլացնում և սիրտը ահ ու դող դցում: Յանկարծ այն տաճիկ նաւը, որի մէջ էին մեր երկու գերի նաւաստիները, որոնք յուսահատած իրանց կորձալի դրութիւնից իրանց յոյսը Աստուծոյ վերայ էին դրել, ու նրան ջանեռանդութեամբ աղօթք անում, սարսափելի ձայնով թռաւ օդը կոր կոր գառնալով: Մեր երկու նաւաստիները, կրկին օգնումը բաւական ճանապարհորդութիւն անելից յետո, ընկան ծովը մի Ռուս նաւի մօտ. նոցա բարեկամները նրանց տեսնելով իսկոյն ազատեցին: Ահա կրկին ժպտաց նրանց բաղդը: Միայն սա երկար ժամանակ չմնաց նրանց հաւատարիմ, որովհետև այն խեղճերը իրանց կրկին ազատութեան փոխարէնը ստիպուեցան իրանց ոտները զոհել: Նոցա ոտների շղթաները այնպէս վնասել էին նրանց, որ բժիշկների խորհրդում վճռվեցաւ, որ նոցա ոտները կտրեն, որ իրանք կենդանի մնալ կարողանան: Այս էլ մի մեծ քամբախտութիւն էր նրանց համար, միայն այն էլ փոքր բաղդ չէր, որ հեշտութեամբ կատարվեցաւ նոցա վերայ ոտներնը կտրելու գործողութիւնը, որից յետո նոքա երկուսն էլ բաւական ժամանակ կատարեալ առողջութեամբ ապրեցան, մինչև վերջապէս ընկան այն վիճակի մէջ, որ ամեն մարդու համար անպատնալի է:

Այս յիրաւի պատահած անցքը գուցէ առաջինն է իր տեսակում աշխարհիս ստեղծագործութիւնից գէթը:

ԶԹՕՍՈՒԹԻՒՆ

(Շարունակութիւն, տե՛ս թիւ 21 :)

Մանկը հիմի աշխրանիքն էլ էին քէմ անում. Զատկի էգնէն, ամա էս քէմ անելուն իրանք մատաղ չին ասում:

Էս հիմերու վարժապետները իրանց աշկրաներումն մօտ չին անում մէ մէ աթաս, ան երկու երկու աթաս: Էս փուղերով ուսանելու խմբներ չին առնում ու աշկրատներուն տանում չին ան տափչան բաղը: Ամա դրուստ ասիմ, թէ վուր էս վարժապետները ծըպըտպոշներումն չին, խօմ մօտ աթած փուղի կէսը իրանց ջիբն չին դցում: Շատ օմքին կուլի վուր էս չաւատայ, ամա էս դրուստ բան է: Ա՛յ մէ արմնալու բան էլ բան էլ պատահիմ էս վարժապետներու վրայ: —Մէ տէրտէր վարժապետ տասըհմուսի առչի օրը էս է ասում իր աշկրաներուն. «Էքուց դիփուռնանքա էլ չինձ տիս էկէք ու մէ մէ խնձոր բերէք:» Ի հարկէ խնձորն առանց աթաս ու երկու աթաս չէր ըլի: Մնամ վուր էս աշկրաներումէն մէ քանիսը վռնչէչ էչ չին տարի ու մէկէլ էքսը լաւ քոթակ էին կերի: Մախլաս ասած է, թէ ամեն մարթու միկիը իրան հարցուսմ կուլի: Մինք միրն ասինք:

Աշկրանիրը հայ չին ուտում, կարքով խալ չին անում, էլ վռնց կռիւ, վռնց դալմաղալ: Ինչի՞ հնդու համար վուր վարժապետը դլխներուն կանգնած է ու մէկ վուր «հը» է անում, դիփուռնանքը մռնչին կհնում:

Հիմի վի կալնինք 20-25 տարեկան տղերք:

Մօտ կուլին 10—15 տլայ. փսոն կուհանին 2—3 մանեթ, կհան բաղը. առուտովանից ինչկի, մռեթը հնդի կուհնան: Առուտհան ու իրիդնապահը կաթնով չայի կու խմին: Ձաշին լաւ ջագովի խորաթ կուննան. թաղա ձուդը խմի, էլ ինչ ասիլ գուզէ: Չիդներուն դայրայ, նալարայ, չուննդուր չին տանում: Լաւ լեգլեվար չին խաղում: Հաչվար, վրացկվար, թուրքկվար հաղեր չին ասում: Ամա էս էլ մռնչներումէդ չգցիք, վուր սրանց սուփրումը պառշալի էլ է ըլում: Սըրանց խմած կինացներու մէջն լաւն հասուն չին: «Աստուձ կինք տայ նըրան ով որ ուզի կուսիրի»—«Աստուձ կինք տայ նրան, ով որ ինքն հասի չէ ու իրա սիրան էս տի է:» Սուփրէն վի քաղելու վախտը վերջի ստաքանը խռիլիս էս ի ասում «Աստուձաչինը ըլի միր քոմադը:»

Էն գիշերը ամեն օմքին էլ տուն է գնում՝ չառթած, փսորած ու մէ քիչ էլ դցած:

Էհէնց քէփ չին անում փեշաքերու ու կուպճներու աշկրանիրը:

Էլի կան մէ կարք մարթիք՝ հասկացողնիր ու ուսում առածնիր: Սրանց քէփը ուրիշ հանգի է ըլում: Տէհնինք, թէ վռնց է ըլում:

Էս տարվան սրանց քէփ անելու մահանէն ուխրօ Սաամրոլու Հաերու Սահմանադրութէնի դասատուին էր: Ասին «էկէք. մինք էլ մէ ուրախութիւն անինք միր ախպէր Սաամրոլցիրու հիդ:» Մոդ էլան 10 12 հոգի. հայ ուտելու օրը նշնեցին Ապրիլը 24ին չորէք շափթի օրը:

Էն օրը առուտհան մէ քիչ սմրաճ էր, ամա ճաշուելին՝ դուն ապրիս մէ պլպլալի օր արաւ, վուր էլ չի ասում: Գնացին բաղը: Սիրուն՝ վրանը վերթողնիլ. խորսվածնիրը շարեցին: Ուռնէին լաւ թարթի դուշլաթ խրդելալայ, կարմիր ձու՝ վուր Զատկի նշանն է, շամայատ, խոշաճ գառը. կինին էլ խօմ ինչ ասիլ գուզէ ու էլի մի քանի բաներ: Ամա էս էլ ասիմ, վուր էրկու հայ աշուղ էլ ուներին հիդներուն: Սուփրէն դը-

ցնցին. չուրս բոլորքը նստոտեցան: Մէկին հալալ Թա-
մազա ջողեցին: Սրանց բախանէն՝ մինձ աշուղը շատ
լաւ քամանչայ էր ածում. հնչեց պատուական, վուր
մէկ անդաձ էլեր դնում, կօսկեր ճիանուր էլին ածում.
մէկէլ կօսկեր, թէ սկրիպկի ձէն էր գալի. մէկէլ հէնց
գիդէլեր, թէ Ռսի մաղզիկի ձէն իս լսում (վիրջը իմոր
Ռսի մարշ ածաւ):

Հաց ուտիլը վուր կցեցին, Թամազէն գինի ածաւ
ու ասաւ «Աստուձ կինք ասյ Թաքաւորին իրա կուխ-
կի նստողին ասաւ «ալավերդի» (Աստուածաստուր): Նա
էլ ջուղաբ էրիա «նախշի օղ» (առողջ կենաս):

Էս կինացի էդնէն Թամազէն վուտի վրայ վիկացաւ ու
բաձրը ձէնով ասաւ «Աստուձ կինք ասյ Հաուց ասկին.
Աստուձ հաստատ պահէ նրան» էս կինացի վրէն «Ա-
րիացիր գոնեայ» տադն ասին: Էս տադն ասելիս՝ դուն
ապրիս՝ հոբինեորուն փառաւորվից: Ամար տասէրկու
հոքին բաձրը ձէնով ու մէտի մէ հաղ ասին քամանչի
ու չունգուրի հետ. էն էլ ի՞նչ հաղ. «Արիացիր գա-
նեայ» հաղը, վուր միր քաղկի Թէատրումը առչի գամը
չաճին, դիվուանցին էլ էնէնց գուր էկաւ, վուր հիմի
Թէ մինձ Թէ պատիկ, Թէ Հայ. Թէ վրացի, Թէ Թուրք,
Թէ ուրիայ՝ դիվուանցին էլ սորվեցան ու ասում էին:
Ջիմ գիպի, ախպէր, քարէ սիրա էլ վուր ըլի է, էս տա-
ղին անդաձ դնելիս կամանց կամանց կուփափկի, իրա
գարդն ու փիքրը մահն կու գցէ, ու հէնց կու գիպե-
նայ դրախտուձն է:

Էս հաղի էդնէն Թամազէն Հաքէուր Տիրուչ կի-
նացը խմից: Էս կինացը իմոր դիվուանցը խմեցին,
Թամազէն վի կացաւ վուտի վրայ՝ Սահմանադրութե-
նի ու Ստամբոլու հաէրու կինացը խմից: Էս կինացը
խմելիս «Սահմանադրութեան տարէդարձի» հաղն ա-
սին: Ա՛յ էն հաղը:

ԱՌ ՏԱՐԵԴԱՐՁՆ ԱԶԳԱՅԻՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Արիք Հայկազունք՝ յառաջ ընթանանք.
Սահմանադրութեան նոր բարև մ'ալ տանք.
Որ՝ Ազգն երբ զինի փրկարար գոչեց.
Նոր հոգի, նոր կեանք Անոր պարգևեց.
Եկէք, բարեկամք, առ բարձրեալն Աստուած
Ուղղենք մեր մաղթանք սուրբ սրտէ բղխած:
Կեցցէ, կեցցէ, կեցցէ միշտ
Ազգն ու Սահմանադրութիւն:

Զրկանք, բռնութիւն վաղեմի վարչութեան
Բերին մահն ի դուռն Հայոց Ազգութեան.
Սահմանադրութիւն Նկաւ զայն վանեց
Եւ կեանց ուղին մեր առջին հարթեց.
Յառաջադիմութեան բացաւ ասպարէզ,
Ուր ամէն վայրկեան գոչել պարտ է մեզ.
Կեցցէ, կեցցէ, կեցցէ միշտ
Ազգն ու Սահմանադրութիւն:

Ջնջեց ամենայն կարծիք անհնական,
Խեղդեց ամենայն անհատական ձայն.
Հրաւէր կարդաց Աստուծոյ ձայնին,
Առաջնորդ լինել գործոց Ազգային.
Այն որ Աստուծոյ ձայն տուաւ մեզի,
Սեզնից Թող առնու ձայնով մ' այսպիսի՝
Կեցցէ, կեցցէ, կեցցէ միշտ
Ազգն ու Սահմանադրութիւն:

Հայերս անարգուած փրկից բարձրացուց,
Մարդկային կոչման մեզ արժանացուց.
Շնորհեց մեզի, զոր ազատ Աստուած
Մարդկային երկրորդ նշանն է դրած.
Որուն շնորհիւն յարգ ստացանք մենք,
Անոր յարգ տալով ապրինք ու երգենք՝
Կեցցէ, կեցցէ, կեցցէ միշտ
Ազգն ու Սահմանադրութիւն:

Դու ալ Հայաստան սիրուն հայրենիք
Ալ այսուհետև մի' ոգար լռիկ,
Զի ալ քո որդիք նոր ոգւով բերկրեալ
Զքեզ Հարս կուգեն տեսնել զարդարեալ.
Ալ մի' լար, մայրիկ, լացէ ի պար փոխէ
Եւ ձայնով քաղցրիկ որդւոցդ հետ երգէ՝
Կեցցէ, կեցցէ, կեցցէ միշտ
Ազգն ու Սահմանադրութիւն:

Հայեր, միանանք մեր մօր հետ օրհնենք.
Ջանանք, որ մեզի տուին սուրբ օրէնք,
Սահմանադրութեան բարեաց փոխանակ
Թող վարեն ուրախ ի կեանք փառունակ.
Թող և մեր որդիք հետ անոնց անուան
Բիւրաւոր տարիք օրհնենք ու կարդան՝
Կեցցէ, կեցցէ, կեցցէ միշտ
Ազգն ու Սահմանադրութիւն:

Խիզճ աշուղը վուն չէչ էր իմացի Սահմանադ-
րութէնի մասին հարցրուց՝ «էս Սահմանադրութին
վուր ասում իք, էա ի՞նչ բան է:» Նրան հասկացրինք,
վուր Ստամբոլու Հայրը իրանց համա օրէնք ին գրի
ու էտ օրէնքը Թուրքի Սուլթանը հաստատիլ է, էս
օրէնքի անունը Սահմանադրութին ին ասում: Սրա
զօրութէնով Ստամբոլու Հայրը կունենան իրանց պօ-
լեցին, դատաստանատիրը, իրանց դատաւորնիրը: Մէ-
խօսկով իրանց գաւէն, զալմաղալը, իրանց Թէ լաւը,
Թէ վատը իրանց ձեռով կարաւան կօնին:

Իմոր էս էլ պրծան, Թամազէն ասաւ «Աստուձ
կինք տայ նրանցը, վուր Հաուց ասկի համա աշխա-

տուր ին ու նրա առաչնորդն ին ուզում։ Էս էլ մեր խմեցին Թամադին ասաւ «էս էլ Աստուձ կինք տայ մեր տէրտէրներուն, սիւաղլուխներուն ու ինչ որ Հոգեւոր տէրունքն ցաձր կան։ Աստուձ նրանց աւելի շնորք տայ, մեր աւելի լաւ կառավարին իրանց ժողովուրդը։ Էս էլ մեր պրծան։ Լաւ, էս կինայն էլ մեր խմեցին։ Թամադին ասաւ։ Ա՛ք լաւն էլի իմ դէմի։ «Աստուձ օղորմի նրանց հոգուն, օվքիր Հաւուց ասկի համա արուն ին վիճի ու աշխատիլ ին մեզ էս տիղը հասցնելու։ Ու ինչդր սրտիր կան՝ ձեռն առ Աստուձ բռնին, մեր Հաւուց ասկը ծախկին, ծլի՝ մեռնդոր օրիշ մի մինձ ասկիրը։»

Իժում Հաւուց ուսումասաձ տղերանց կինացը խմից։

Իժում ուսումասաձ տանդող էրկխերանց կինացը։

Սրա էդնէն Թամադին ասաւ «զիդիք ինչ կայ։ էրկու մարդրաներու պէս կինաց էլ է ձեացի։ Էս գիդիմ կու հարցնիք, մէմ կինացն է։ Էս էլ կօսիմ մեր Հաւուց աչկերանց կինացն է։

«Աստուձ կինք տայն Հայ աչկներուն ւմեր Հայ մարթ կու սիրին։

Էս կինացներդը էնենց ուրախութէնով խմում էին, թէ մեր սրանց տեսիլ եիք կօսիք ստուիրէն նուր ին նստի Հայ ուտելու։

Վերայ էրկուսը Թամադին խմից Հաւուց էն աչկերանց կինացը մեր ուսում ին առի՝ ան ուսում ին առնում մեր ասկի համա լաւ գիդիք պիտին դառնայ։ Դեխտանց վերջը իրանց կինացներդը խմեցին։

Կինացներուն պրծան ւ գուք էլ պրծնիք ամէն չարումն։ Սմա մինձ էշը գոմը մնայ։ Չարխաւ բանը չաւի։ Կինացնիք խմեցիս գխտնի մեր իրա լաիդ Հազ էին ասում։

Աստծ Հազերը էսսունք ին՝

«Էր Հուանոս»

«Հայոց աղջկներ»

«Մխիթարնակ»

«Բաժանիներն առնունք եղբարք»

«Մեր կեանքի նման»

«Կալիֆայ քաղաք»

«Իմ սրտին ազիս արել»

«Բարի սհաթի ուստ էկանք»

Սուրբէն մի քաղեցին։ Ինչդի չայն կու խմին լաւ մէնայաւ։ Քու արուը գիպնայ մէ սերուն ծանդր ու բարակ հազ ասելով քամաչայ ու չունդուր ածելով տուն ին գնացի։ մեր տեսիլ էիր, կօսիքը սաղ աշխարքը նրանց է մնացի ու վանքն իրիցներուն։

Հլմի գանք Համքրի մատաղը։

Հալա առաչ սիտունք ասի, մեր ամէն փեշաքար ջոտկումն բռնած ինչդի Թևլեթօրէն (Համբարձումն) էրկու շափիհ օրերով դուքնիրը կոխտատում ին ու էս էրկու շափիհ օրերը մատաղ ին անում։ Այ վռնց։ Ամէն համքար առնում է էրկու օխտար ու իրիք ան ըս բա լիդրը բրինձ, շնլափալաւ է հիւսում բաժնում է խիխած մարթ կերանցը ան նարիդալին է(բիրթը)դըրդում առաւտնիրու համա։ Սրա հիմնը իրա դալմդլով մէկի շնորհն ին կոպում։ Իրանք դիմ մէտ դուքնիրը կոխտրով կոխտատում ին ու առաւտան օխտին ան ուրը սհաթին գառնով ու բայրաղներով գնում ին բաղը։ Ամէն ուստա պարտական է ուստարացը համա Թայդուլ տանէ, ան Թէ չի քոնդրի կինայ, ան տարխուն, ան սալաթայ։ Թէ տարածը քոնդար է, տարխուն է ան սալաթայ է ըլում, խոմ ստիպում ին. Թէ Թայդուլ է ըլում ուստարացին մէ մէկ միմին։ ուստերուն Թամադայ է անում։ Խորացն ինչին գառնում։ Հայ ու պանիրն ու կանանչին անպակաս կուլուրիշ ունենում ին. գոշ գառան չըխըրթմայխորված գառը։ Շատ համքրնիր չըխըրթմի տիղ տալմայ ին ունենում։ շատը փլաւ էլ աւելցնում ին, գինին խոմ մարթապլուխ կէս Թունդի։ Էն օրը սուփրէն գցում ին սհաթի մէկին ու ինչդի մուրթը Հայ Հարայ գըցում ին։ Հայ ուտելու վախտը ջհել ջհուընիրը կանգնած դուլուղ ին անում։ Մթանը էլի գառնով բայրաղով ձեռներին պայդունիր ու վառած խաստակ մըմիր գալիս ին ինչդի իրանց փողոցը ու իժում ցրվում ին։ Շատ ուտէք մէկէլ էքան էլ ին գնում փուղ ին վեր գալի։ Ան Թէ չէ մէկի վուրթու կինացն ին խըմում, մէկէլի հօրն ան ախտօրն ին օղորմի ասում, ան մէկին սուտ հօլ ին գցում. ան մէ քանի ուտէք ուրիշ տիղ առաւտուր ին արած ըլում, մէ մէ մանկէ նրանցմէն ին մօդ անում։ Էս մնդ արած փուղով հայ ին ուտում։

Համքրներուն վուր հարցնիս, Թէ ինչի համա իք մատաղ անում։ կօսին՝ Աստու համա, վուր էս տարուայ արտիրը լաւ հասնին, մասիրը լաւ գայ ու լաւ տարի ըլի։

Ուրիշ էն Թահր մարթիք էլ կան, վուր գալիս ին էս ան էն համքրում օմնվում ին ու էս Թահր օրիրը, իխոր համքարը ստիպայ է ունենում, գալիս ին սրանք էլ բերում ին մէ գաղաւր գինին, ան մէ օսկի փուղ։ Էս օմնվոններումն բազազ է ըլում սովդադար ել։ մէ քանի քահկիք էլ կան օմնած։

Մայիսի 7. 1863. Մ. Գազարեանց։

Հրատարակիչ Հ. ԷՆՖԻԱՃԵԱՆՑ (ի ՏՊԱՐԱՆԻ Գ. ԱԼԵՔՈՒՄԵԱՆՑ
Խմբագիր Պ. ՍԻՄԷՕՆԵԱՆՑ (Հ. ԷՆՖԻԱՃԵԱՆՑ։

ДОЗВОЛЕНО ЦЕНЗУРОЮ. 20 Іюля 1863 г.
ТИФЛИСЪ.